

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան զինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:

Առանձին համարները 5 կօպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբարբաջիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Նորին Կայսերական Մեծութեան Պալատի Կամերլեր Իշխան ՆԱԶՕՆ ԳՄԻՏՐԻՆ-ՎԻԶ ԹՈՒՄԱՆՈՎԻ այրին, Իշխանուհի Աննա Խլանովնա ԹՈՒՄԱՆՈՎԱ իր զուտ-տրներով և իր փեսայ, Նորին Կայսերական Մեծութեան Պալատի Կամերլեր-Իշխան Նիկոլայ Պալլադի ՈՒՐՈՒՍՈՎ, խոնարհաբար խնդրում են համագործակցել Իշխան Նազոն Գմիտրիին ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկաւորութեան հանդիման նորա բնակարանից դէպի ՎԱՆՔԻ մայր-եկեղեցին, այս ԿԻՐԱՎԻ օր, հոկտեմբերի 9-ին, առաւօտեան 10 ժամին: Իսկ մարմնի ամփոփումն տեղի կունենայ ընտանեկան դամբարանի մէջ, Սուրբ-Կարապետի եկեղեցու պարխաներում:

2—2

ԲՈՇԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՄՆԱՆՆԵՐԻՆ
ՆԵՐՔԻՆ
ԿԱՆԱՆՑ Հիւանդութիւններով առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:
Տղամարդկերանց ՆԵՐՔԻՆ և ԿՈՎՈՐԻ Հիւանդութիւններով երեկոյեանները
5-ից մինչև 7 ժամը:
ՍԵՐԳԻԵՎՍԿԻ փողոց, ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՅԻ տունը՝ համար 6:

3—3

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բագուցի: Նա-մակ Խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-ՍՈՒԹԻՒՆ: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լու-րեր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: ՇԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅ

Հոկտեմբերի 2-ին

Մենք հայերս ստիճի ենք դարձրեցինք մեր գործը, երբ նա արդիւնների է պատահում: Փոխանակ աշխատելու, որ արդիւնների առաջն առնենք, դրոշմում ենք գործի ճակատին հրովա չը փնա-ցող: անունը և ձեռնարկ ծաղակ հանդիստ նըս-տում ենք մեր տեղը: Այդպիսի դէպքեր չառ են պատահում մեր մէջ:

Մի քանի տարի անցնելուց առաջ պ. Կարապե-տեանը, որ երկաթուղու վերայ ծառայող էր, սկսեց մարդասիրական ընկերութեան դահլիճումը կիրակի օրերը դասախոսութիւններ կարդալ, նիւթ վեր առնելով ֆիդիլիայից և առհասարակ բնական պատմութիւնից: Որքան դաւաճում էին ֆիդիլիական կամ քրիստոնէական փորձերը ժողովուրդի սիրտը: Մի քանի ձերբակրկներ դասախոսութիւնը վերջա-նալուց յետ մօտեցել էին պ. Կարապետեանին և նորանից հարց ու փորձ էին անում իրանց լսած-ների մասին: Պարոնը ցոյց էր տալիս նրանց, թէ ինչպէս են ներգործում միմեանց վերայ եր-կու մարդիկները: Դերութիւնները զմայլում էին: Մի ուրիշ անգամ դասախոսը կամեցաւ յոյս տալ օդի ձնշումը, դարակեց օդը մակերեսագիտական կի-սագիտութիւնի միջին (Магдебургскія полушарія) և առաւ հանդիսականներին, առաջարկելով բա-ժանել նրանց միմեանցից: Ամենքը փորձեցին ի-րանց ոյժը, բայց չը կարողացան: Գասախոսը ամենքի առաջ չուռ տուաւ վիճարկ և օդը ներս մտնելով կիսագնդերը իրանք իրանք բաժանուե-ցան: «Բանին մօտիկ արաւ, հա՛—բացազանչեց մի բանուր—էղբայր մարդկանցից մինի խելքը չը կըտ-րեց, որ վիճարկ չուռ տայ»:

Վերջիվերջ երկու օրինակները պարզ ցոյց են տալիս, որ ժողովուրդը հետաքրքրվում էր իր տե-սածովը և լսածովը և օգտվում էր նրանցով: Չընայելով սորան, մի քանի անգամից յետ յաճա-խողների թիւը բոլորովին փոքրացաւ և դասախո-սութիւնները դադարեցին: Սորա պատճառը մա-սամբ այն էր, որ ամառը մօտենում էր, այսինքն այդուհան չըբնու ժամանակն էր, մասամբ էլ այն,

որ պրիւրորները զժուարտութեամբ էին ձեռք բերվում, որովհետև իրանց չունէին: Իսկ ժողովուրդին խօս-քերից աւելի հետաքրքրում էին փորձերը:

Ինչ և իցէ մենք ոչորքին չենք մեղադրում դա-դարեցնելու մասին, այլ բանը նրանում է, որ այն ժամանակից անցան երեք, չորս տարիներ, բայց այդքան ժամանակում ոչ մէկը լուսաւոր-ված դասակարգից չէ մտածում կրկին սկսել այդ գործը և աշխատել արդիւնների առաջը առ-նել: Միայն հարկաւոր է աշխատել, փոքր առ փոքր կարելի է արդիւններին յաղթել:

Այս դասախոսութիւնները, բացի այն որ դե-տուլիւն և սէր դէպի դիտութիւնը կտարածեն ժողովուրդի մէջ, դեռ մի ուրիշ օգուտ էլ կունենան տեղա: Բագուցի մէջ միշտ լինում են մեծ թւով այնպիսի հայ երիտասարդներ, որ անդադար չէ՞ն-ու չուայլութեան ետեւից են ընկած, երբեք չեն հետաքրքրվում մի որ և է ուրիշ բանով...: Սոցա էլ դուցէ կգրաւեն դասախոսութեան նման ձեռ-նարկութիւնները և նոցա չէ՞նք և չուայլութիւնը չափի ու սահմանի մէջ կը դնեն:

Տեսնենք, կը գտնուեն արդեօք մարդիկ, որ կաշ-խատեն զլուր բերել այդ ոչ այնքան ծանր գոր-ծը: Սորա համար պիտիջնար լինել հարկաւոր չէ, այլ բաւական է մի որ և է երեւոյթ լաւ հասկանալ և կարողանալ հասկանալ ժողովուրդին: Մենք էլ առ այժմ ընդ բանով կը բաւականանանք, քանի որ մեր (ախտոս այդ բառը) հայկաւարանական հա-յերը, որ Բագուցի մէջ միշտ լինում են (բժշկներ, իրաւաբաններ և այլն), կը շարունակեն ոչ թէ մե-նակ չը հետաքրքրուել հայ ժողովուրդով, այլ և մի տեսակ ստեցող աչքով նայել նորա վերայ:

Ա. Թաւադեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 հոկտեմբերի

Անցած 82 թիւ օգոստոսի վերջերում, Թիֆլի-սից իմ բացակայութեան ժամանակ ստացվում է իմ անունով Բագուցի, տիկ. Զ. Գուրգենեանցից «Պանդուխտ» անունով զբոլ բաժանորդագրու-թեան թերթը. դեկտեմբերին վերադառնալով և ստանալով վերոյիշեալ թերթը ձեռնարկումս բա-ժանորդագրութեան: Ստորագրվում են 13 անձներ, որոնցից 5 զեռ. ապաւիկ. 83 թիւ յունվարի 19-ին բաժանորդների փողը լիովին ուղարկում եմ Բագու-յայտնած հասցեով, սակայն մինչև այժմ ոչ զբոլ հրատարակման և ոչ փողի ստացման մասին ոչինչ տեղեկութիւն չունենալով, թէ ևս երկու նամակ են գրած եմ, և մասնաւոր որ բաժանորդներին ուսմանը միջոտ և անընդհատ դիմում են ինձ պա-հանջելով կամ գրեթե և կամ փողը տալ, ուստի ստիպված եմ հրապարակապէս խնդրել յարգելի

հրատարակչուհուն տեղեկութիւն տալ բաժանոր-դներին բաւականացնելու համար:

Իսկ ձեզ. պ. խմբագիր, խոնարհաբար խն-դրում եմ բարեհաճել ներկայ գրուածիս անկիւն մի շնորհել ձեր պատուելի լրագրի սխեմակներում:

Յովհ. Ստեփանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմ-բերի 5-ին, երեկոյեան ժամը 11-ին հասաւ Թիֆ-լիս Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ: Նորին Բարձրութիւնը կը մնայ մեր երկրում մինչև 27 հոկտեմբերի:

Յիշեցնում ենք մեր բաժանորդներին, որ տա-րին լրանում է և ժամանակ է արդէն ուղարկել «Մը-շակի» խմբագրութեանը իրանց վրա մնացած բա-ժանորդագրների ապաւիկները:

Այսօր տեղի պիտի ունենայ Թիֆլիսի Նախկին քաղաքապետ իշխան Նազոն Թումանեանի թաղ-ման հանդիսը:

Կողը դիւղի ուսումնարանի հոգաբարձուն խնդ-րում է մեզ տպել հետեւեալը: «Չեր պատուական լրագրի միջոցով խորին շնորհակալութիւն ենք յայտնում պ. Նիկոլայայոս Տէր-Յակովբեանցին որ ընծայեց Ղազարի կողը դիւղի աղբարիկ ուսում-նարանին հետեւեալ դասական առարկաներ. հինգ աշխարհների քարտէզներ, Թաւադեանական աղիւ-սակների քարտէզներ 28 հատ, կենդանաբանական նկարներ 15 հատ, քարեայ տախտակներ խեղճ ա-չակերտների համար 50 հատ, Թաւադեանական դա-սագրեր 5 հատ: Նոյնպէս շնորհակալութիւն ենք յայտնում երկրասարդ խմբակի Գրիգոր Երա-ւանցին, որ խոստացաւ նուիրել մեր դպրոցին իւրա-քանչիւր տարին 25 լուրը դումարը»:

ԲԱԳՈՒՅՈՒՆ մեզ գրում են: «Այստեղ պատրաստ-վում են տալ մի քանի ներկայացումներ նոր բաց-ված ուսումնարանի, դրատան և այլոց օգտին: Առաջինը կը խաղան «Թուղթ խաղաղացող կեան-քը» և «Այ բեզ օյլն» պիէսները դրատան օգ-տին»:

Նոյն տեղից մեզ գրում են: «Մեր փողոցները սկսել են խառնուել. լաւ կը լինէր որ երկաթու-ղու կայարանից մի լաւ ճանապարհ չինէին»:

Մեզ գրում են Բագուցից հետեւեալը: «Չեր լրա-գիրը միշտ բողբոջում է Թիֆլիսի կեղտոտ փողոց-ների համար, բայց երանի թէ դուք գտնվելք Բա-գուցի թէ ներսիքաղաքի և թէ դուք քաղաքի բազմա-թիւ փողոցներում, որոնց կեղտոտութեան համար ոչ բողբոջ կայ, և ոչ ուղաղրութիւն դարձնող: Սեպ-տեմբերի 30-ին Ղուրբան-Բայրամի տօնի օր էր, այդ օրը մօրթվում են հազարաւոր ոչխարներ, որից յետոյ միւս օրը փողոցներում թափված, լի էին թէ ոչխարի աղիքներ, աղըր մէջը լի, թէ սատկած հաւեր և այլն, որոնց մօտով անցնելը առանց քիթը բռնելու անհնար էր: Նոյնպէս սարսա-փելի դարձանութիւն կայ և քաղաքից դէպի Սե-քաղաք տանող ճանապարհի վրա: Այդ բոլորի վրա դարձնում ենք քաղաքային վարչութեան ուղա-ղրութիւնը»:

Մեզ պատմում են, որ Թիֆլիսի արհեստա-կան Միխայլեան դպրոցում առհասարակ զժուա-րամարս և անմարդու կերակուրներ են պատրաս-տում աշակերտների համար: Մի օր միւսը վատ հոտ ունի, միւս օր իւրը ճին է և այլն: Կերակու-րի մէջ ճանձներ լողալը արդէն սովորական բան է: Խոհարարը իր արհեստին անհմուտ մարդ է և անուշաղիք է իր պաշտօնին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 25 սեպտեմբերի

Ամբափակ դռներով նիստ ըրաւ Ազգ. ժողովը ուրբաթ օր, սեպտեմբերի 23-ին: Ներկայ էին վաթսու երեսիսունը և վեց ժամ շարունակ խօսեցան ու միճեցին: Վիճարանութեան առաք-կայն էր Կաթողիկոսական յանձնաժողովոյ տե-ղեկագիրը: Վերջապէս մեծ գաղտնիքը երևան եկաւ, և շիտակը որպիսի ուղաղրութեամբ նայենք այդ տեղեկագրին վրայ, այնքան աւելի կը դար-մանայր թէ ինչ կար դադանի պահելու մինչև հիմա: Նոյն իսկ այս նիստին դռնփակ ըլլալը հարկաւոր չէր, վասն զի այն օտարները որը պէտք ունին զիմանալու թէ ինչ խօսուեցաւ, ինչ որոշուեցաւ այդ ժողովին մէջ, իսկոյն նոյն օրը կիսմանաւ. իրենց մարդերը ունին ժողովի մէջ: Որինակի համար տաճկաց կառավարութիւնը եթէ ուզէ իմանալ նոյն առարկայ եղածները, միթէ չը պիտի ըսեն դայն իրեն անոնք որ Կրան պաշտօ-նեայ են և ժողովի անդամ: Կը համարձակին հա-կառակը ընկալ: Այսպէս ուրիշներն ալ իրենց մարդերը ունին: Բայց ինչ որ ալ ըլլայ, այստե-ղի լրագիրները չը հրատարակեցին եղած վիճա-բանութիւնները, և երեսիսուններէն ոմանք ալ մեզմէ խնդրեցին որ մենք ալ առնեց վրայ բան մը չը գրենք, և վասն զի այսպէս պատշաճ կը տեսնեն, մենք ալ անոնց ըսածին պէս կընենք: Կարգապահութիւնը աղէկ բան է: Իսկ գալով այն ծրագրին համար դու ներկայացուց յա-ձնաժողովը այդ ալ չը հրատարակեցին, այս-տեղի թերթերը, վասն զի ժողովը այսպէս որո-շեց, բայց մենք գաղտնի խորհրդակցեցանք մի քանի զլաւաւոր երեսիսուններէն: հետ որ ար-դեօք շեռտ մը կայ, եթէ այդ ծրագրին համառօ-տելով հրատարակենք Թիֆլիսի թերթերու մէջ, եթէ շեռտ մը կայ չենք հրատարակել ըսինք: Պատասխանեցին թէ շեռտ մը չը կայ, վասն զի յաջորդ նստին ասոր հրատարակումը պիտի որո-շուի և մինչև որ Տիգրան հրատարակուի արդէն հոս ալ հրատարակուած լըլլայ: Հոս հրատարա-կուելիքը պիտի ըլլայ հաւանօրէն Ազգ. ժողովի սրբադրածը: Հետեւաբար մենք ալ հիմա քիչ մը համառօտելով ներկայացուած ծրագիրը կը հաղոր-դենք դայն «Մշակի» ընթերցողներին և վերջը ինչ փոփոխութիւններ որ ընէ Ազգ. ժողովը դա-նոնք ալ կը հաղորդենք: Այս ծրագրին ընտրու-թեան եղանակին վերաբերեալ մասն է, որ ժողո-վին մէջ դժգոհութիւն յարուց: Ժողովը կողմ էր ընտրութեան եղանակը մնայ այնպէս, ինչ-պէս որ եղաւ Գեորգ Կաթողիկոսի ընտրութեան առնա: Սակայն ժողովակաճը կ'երկնչին որ իրենց կամքին անկախ պարագայներ խնդրեն ու-րիշ կերպ ընեն: Վիճարանութեանց տեղեկակ եղողներն կը տեսնեն որ շատ անախորժ պարա-գայներ ծագեն դուցէ: Խմբակեան կախկալուած, որ տեղեկարարն է Գանձախոսութեան, ըրած է կարևոր յայտարարութիւններ: Կը վախճանք որ վերջը դէշ ըլլայ: Խնդիրը պիտի դառնայ այս հարցին շուրջը թէ նոր ընտրութեան մէջ Պոլսեանիայի օրէնքները պիտի յարգուին, թէ պիտի բարեփո-խուին: Բարեփոխութիւնը չը կրնար կատարուիլ միայն մեր Ազգ. ժողովի կամքովը, վասն զի Պո-լսեանիան հաստատողը նա չէ եղած: Իսկ այս բարեփոխութիւնները ձեռք բերելու համար ինչ եղած է, ոչինչ յայտնի է: Կերեկ թէ բան մը չէ եղած, ինչպէս տեսնուեցաւ անուղղակի յայ-տարարութիւնէն: Առաջիկայում, սեպտեմբերի 30, Ազգ. ժողովը նիստ պիտի ընէ, նորէն դռն-փակ, և պիտի դրաղի ընտրութեան եղանակի հարցովը:

Գանձախոսովի տեղեկարար Մատթէոս կախ-կալուս Խմբակեան ներկայացուց մէկ տեղեկագիր

մը և մէկ ալ ծրագիր մը: Տեղեկագիրը պատմական հայեցողութիւն մէջ կաթողիկոսական ընտրութեանց, ձեռնարկութեանց և զանազան անոնց վերաբերեալ ուրիշ պատմական կէտերու: Կարեւոր և լաւ կերպով դրուած տեղեկագիր մ'էր: Չը մոռանանք ըսել որ Պատրիարք սրբազանը հիւանդ ըլլալով ներկայ չէր ժողովին, նոյնպէս ներկայ չէին պ. Սեյրիլէն, ատենապետը և խորէն սրբազան: Վերջիններս թէպէտ երեսփոխան չէին, բայց իրր անդամ հրաւիրուած էին:

Ահաւասիկ ծրագիրն համառօտութիւնը: Ծրագիրը բաժնուած է երեք մասերու: Ա. Հիմնական սկզբունք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ. Բ. Հայրապետական իշխանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ. Գ. Կանոնք կամ եղանակ ընտրութեան Հայրապետի ամենայն հայոց:

Ա. մասը բաժնուած է ինը յօդուածներու, որոնց բովանդակութիւնն է. Հայաստանեայց եկեղեցւոյ հիմնադրները ս. Թադէոս և Բարթողիմէոս են, վերահաստատիչը Լուսաւորիչ, ուստի Հայաստանեայց եկեղեցին առաքելական է:—Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխը Քրիստոսն է:

—Հայաստանեայց եկեղեցին հաւատոյ կանոնն էր ճանաչէ հին և նոր կտակարանները, կրնորունի Նիկիոյ հանգանակը և միայն երեք տիեզերական ժողովներ:

—Հայաս. եկ. կը բաղկանայ եկեղեցականներէ և աշխարհականներէ. ընտրութիւնը ժողովրդականն է:—Հայաս. եկեղեցւոյ Հայրապետն է ընդհանուր վերատեսուչ Նիկիեցւոյ Հայոց ինչպէս են եպիսկոպոսներն իրենց վիճակին:—Հայաստ. եկ. Հայրապետն, պատրիարքները և եպիսկոպոսները կը կառավարեն եկեղեցին ըստ կանոններու և աւանդութիւններու Հայաս. եկեղեցւոյ:—Ընդհ. Հայրապետը ինչպէս պատրիարքները և մասնաւոր կաթողիկոսները, եպիսկոպոսներն ու անոնց ստորադասեալ պաշտօնականները որպիսիք են վարդապետը եպիսկոպոսները, պարտաւորութիւն ունեն անոնց և անխախտ պահպանել Հայաս. եկեղեցւոյ հաւատոյ դաւանութիւնը, ձեւերը, եպիսկոպոսները:

—Հայաստանեայց Նիկիեցւոյ պաշտօնէից կը վերաբերի քարոզել հաւատադաշնութիւնն և ուսուցանել Սուրբ Գիրքը, Հայ. եկ. վարդապետութիւնները և դպրութիւնը:—

Բ. մասը բաժնուած է երկու գլուխներու: 1-ն գլուխը իրաւունք և պարտք Հայրապետին ամենայն հայոց:

2-դ գլուխը, յարաբերութիւն Հայրապետին ամենայն հայոց, Ա. ներքին յարաբերութիւնը. Բ. արտաքին յարաբերութիւնը:

Այս Բ. մասի 1-ն գլուխը բաղկացած է քսան և մէկ յօդուածներէ զոր կը համառօտենք հետեւեալ կերպով:

Ամենայն Հայոց կաթողիկոսի տիտղոսն է ծայրագոյն Պատրիարքը: Հայրապետն կային:

—Աշխարհիս բոլոր հայ եկեղեցիներու մէջ կը յիշատակուի Հայրապետին անունը: Նկ. Հայրապետը միայն իրաւունք ունի միւսոն օրհնելու և բաշխելու:—Նիկիեցւոյ Հայրապետը միայն կը ձեռնադրէ եպիսկոպոսները և առաջնորդ կը կարգէ եկեղեցւոյն հայոց, յանձնարարութեամբ Ռուսաստանի մէջ իւրաքանչիւր թեմական վիճակի և վանական միաբանութեան. իսկ Թիւրքիոյ համար ըստ յանձնարարական վկայագրի Հայոց Պատրիարքին Կ. Պոլսոյ, հիմնուած ժողովրդական ընտրութեան վրայ, վիճակներու և վանական միաբանութեանց: Կաթողիկոսը ունի մերժողական իրաւունք, ինչպէս եպիսկոպոսներն ունին իրենց կատարելիք ձեռնադրութիւններու մէջ:

—Հայրապետին իրաւունքն է հրաժարեցնել Առաջնորդները երբ տեսնէ անոնց անհաւատարմութիւնը առ եկեղեցին, երբ արդար զանէ ժողովրդին բողոքը: Այս հրաժարեցնելները Ռուսաստանի մէջ Հայրապետը ուղղակի կ'ընէ, իսկ Տաճկաստանի մէջ ձեռնադրելու փոխանորդին որ է Կ. Պոլսոյ Պատրիարքը:—Ամենայն Հայոց Հայրապետը իրաւունք ունի գումարել Նիկիեցական ընդհ. ժողովը:—Ամ. Հայոց Հայրապետը կը խորէ ժամանակ ժամանակ ընդհանրական թղթեր, կոնդակներ աշխարհիս ամէն կողմ գտնուող Հայոց ժողովրդին: Ամ. Հայոց Հայրապետը իրաւունք ունի պարտք այցելել Հայոց ժողովուրդին, ուր որ զբոսնեն:—Հայրապետը Մայր-Աթոռն է, քաղաքներէն

ընէն եայն ելնելու և հոն մտնելու ատենները իրաւունք ունի ըստ նախնի սովորութեան ուղեորուել ամենայն փառօք և պատուով իր ազգին կողմէն առջնէն ունենալով խաչը, հայրապետական քօղը և դաւադանք: Ա. Մ. Հայրապետն իրաւունք ունի հաւաքել բոլոր Հայոց ժողովուրդէն նուիրակութեան տուրքն կամ նուէր ի բարգաւաճման Մայր-Աթոռոյ, և այլն:—Հայրապետը իրաւունք ունի պահանջել ամէն տարի համար ծննդներու, մկրդտեաներու, պատկեաներու և վախճանեաներու ի գիրկա Հայոց Նիկիեցւոյ:—Հայոց հողերական դպրոցները են Հայոց Հայրապետին բարձր հըս-կողովութեան և հովանաւորութեան ներքեւ Հայրապետը կը հսկէ դպրոցներուն վրայ և կը տնօրինէ հարկ եղած բարեփոխումները Ռուսաստանի մէջ թեմակալ առաջնորդներու ձեռքով, իսկ Տաճկաստանի մէջ իր փոխանորդ Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքի միջոցաւ:—Հայրապետը պարտաւորութիւն ունի հաստատել հողերական դպրոցներ ուր որ անկ է:—Հայոց եկեղեցիներու և վանքերու կալուածներն ու գոյքերն Հայոց Հայրապետին անմիջական իրաւանց են, որ միայն իշխանութիւն ունի տնօրինելու անոնց զեւման և վաճառման խնդիրները, Ռուսաստանի մէջ խորհրդակցութեամբ թեմական եկեղեցւոյ, իսկ Տաճկաստանի մէջ կը գործադրէ Պօլսի Պատրիարքի ձեռքով: Հայաստանեայց եկեղեցւոյ վանական եկեղեցականներու ամէն տեսակ գոյքերու և ստացուածներու ժառանգն Հայոց եկեղեցին է: Հայոց Հայրապետն իրաւունք ունի հսկելու որ այդ կարգի եկեղեցականներու ստացուածքն անոնց վախճանէ վերջ դառնան ստացուած այն միաբանութեան որոյ կ'անդամակցէին անոնք, սոյն իրաւունքը Տաճկաստանի մէջ կը գործադրուի Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի ձեռքով:

—Հայ. Նիկիեցւոյ հողերական գրքերու ազգադրութեան հրամանը միմիայն Հայոց Հայրապետը կ'ուստայ: Ռուսաստանի մէջ իրմէն կարգեալ պաշտօնէին ձեռքով, իսկ Տաճկաստանի մէջ իւր փոխանորդ Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքին հրաւիրուած են Նկ. հողեր գործերու բարձրագոյն տնօրինութիւնը անկ է միայն հայոց Հայրապետին որ պարտաւորութիւն ունի անխախտ պահել եկեղեցին իր սկզբունքներուն մէջ, հսկել ամէն ուրեք եկեղեցւոյ վրայ և ազատ պահել և է արտաքին միջամտութիւն:—Հայոց Հայրապետը կը վարէ հայ. եկ. վարչութիւնը: Նա կընտրէ իրեն աջակից երկու խորհուրդներ մին հայրապետական, և միւսն տեսչական (սինօղ) —Հայրապետական խորհուրդը կը բաղկանայ վեց եպիսկոպոսներէ: Նորա պաշտօնին է աւանդապահութեան սահմանին մէջ խորհրդատու ըլլալ Հայրապետին ի տնօրինութիւն ընդհ. խնդիրներու:—

Տեսչական խորհուրդը (սինօղը) կը բաղկանայ չորս եպիսկոպոս, չորս վարդապետէ. պաշտօնն է խորհրդատու ըլլալ Հայրապետին տեղական մասնաւոր գործոց մէջ ի Ռուսաստան, առանց իրաւունք ունենալու միջամտելու ընդհանրական նկարագիր ունեցող խնդիրներու ի հողերու:—Չանարատ պահպանութիւն իրեն յանձնեալ աւանդներուն համար Հայոց Հայրապետը պատասխանատու է Աստուծոյ որպէս և եկեղեցւոյն Հայաստանեայց: Բ. Մասի 2-դ գլուխը երկու մասերու բաժնուած է, ներքին յարաբերութիւնը, արտաքին յարաբերութիւնը, ընդամենը տասն և մէկ յօդուած է:

Ամենայն Հայոց Հայրապետին ներքին յարաբերութիւնները են, ըստ վաղեմի սովորութեան, Կ. Պոլսոյ և Նրուսադէմի Պատրիարքներուն հետ, ինչպէս նաև Կիլիկիոյ և Ալթամարայ մասնաւոր կաթողիկոսներուն հետ և Ռուսաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի թեմական առաջնորդներուն հետ:—Արտաքին յարաբերութիւններ ունի Ռուսաց Պետութեան հետ: Հայաստ. եկ. Հայրապետը, չնորհի իւր բացառիկ դիրքին անմիջական յարաբերութեան մէջ է Ռուսաց Վ. Կայսեր կառավարութեան հետ: Ռուսաց Վ. Կայսեր թագաւորութեան հանդիսին Հայոց Հայրապետը կը մասնակցի անձամբ կամ նուիրակաւ և կը ձօնէ Հայոց Առաքելական Աթոռոյն օրհնութիւնները և բարեմակութիւնները:—Հայ. եկ. Հայրապետը կը խնդրէ Ռուսաց Վ. Կայսերի հաստատութեան հրովարտակ Ռուսաստանի թեմական վիճակներուն վրայ ձեռնադրած եպիսկոպոսներուն համար: Իսկ Տաճկաստանի թեմական վիճակներուն համար նոյն հրովարտակը Վ. Կ. Սուլթանին կը խնդրէ Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքը: Հ. Ե. Հայրապետը կը բանակցի Կովկասի կուսակա-

լութեան հետ նոյն կուսակալութեան ներքեւ զբոսնող հայ վիճակներու մասնական գործերու կարգադրութեան վերաբերեալ խնդիրներու համար: Երբ իւր առաջարկը չունենայ զոհացույիչ կամ արդար ելք մը, Հայրապետը կը դիմէ Կնիստ. Կառավարութեան և առ Կայսրն անդամ:

—Այն ամէն խնդիրներու համար որք հանրական են և կամ կը վերաբերին Աշոր—Կովկասեան Հայոց, Հայրապետը կը բանակցի կեղրոնական կառավարութեան հետ և ի հարկին ուղղակի Վ. Կ. Կայսեր հետ:—

Ծրագրի Գ. Մասը կը վերաբերի Կաթողիկոսի ընտրութեան եղանակին և տեղապահի ընտրութեան, բաղկացած է տասը յօդուածներէ: Այս մասն է որ ժողովին մէջ փութորիկ կը յարուցանէ: Ժողովը մէջ տիրապետող հոգին կերելի այն որ անխախտ մնայ ընտրութեան առաջին և երկրորդ, այսինքն մեր Ազգ. ժողովն ինքն ներկայացնէ Թիւրքիոյ Հայոց բոլոր քուէն:—Ահաւասիկ ծրագրի այդ մասը:

1. —Երբ վախճանի Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջին գործողութիւնն է պատրաստել ցանկ կաթողիկոսական ընտրելիներու:

2. Ա. Ելմիածնի և Կ. Պոլսոյ կեղրոններն առանձին առանձին եկեղեցական վիճակային ժողով կը գումարեն և դադանի քուէարկութեամբ կը պատրաստեն ընտրելիներու փակեալ ցանկ մը, այս ցանկին մէջ անցնելու իրաւունք ունին:

Ա. Այն եպիսկոպոսները որ Ընդհանուր Հայրապետին ձեռնադրուած են կամ ի նմանէ ընդունուած են Մայր—Աթոռոյ միաբան.

Բ. Այն եպիսկոպոսները որք յանձնին կը փայլեցնեն ամենայն Հայոց Հայրապետին կարեւոր հանգամանքները:

3. Այս կերպով պատրաստուած ցանկին երկու կեղրոններն կը հաղորդեն իրարու և ասոնց միացմամբ կը կազմուի ընտրելեաց միակ ցանկ մը:

4. Որոշեալ ժամանակին երկու կեղրոններն կը հաղորդեն իրենց իշխանութեան ներքեւ զբոսնուած թեմական վիճակներու և վանահայրերու որպէս զի նոյն ցանկին մէջն են նշանակեն իրենց ընտրելին:

5. Ի Տաճկաստան քուէարկութիւնը կը կատարուի դաւառական ընդհ. ժողովներու առանձիններու մէջ, իսկ Ռուսաստան վիճակներու Առաջնորդանիստ քաղաքին և թեմերու եկեղեցական և աշխարհական ընտրող պատուիրակներու ժողովներու մէջ: Թէ ի Ռուսաստան թէ ի Տաճկաստան կը մասնակցին այս ժողովներու Առաջնորդական վիճակներու կրօնական ժողովները կամ հողերու Առանձիններ և վանահայրերը իրենց անօրէն խորհուրդներու դիւանով:

Իբր առանձին թեմ Կ. Պոլսի կը մասնակցի ընտրութեան հետեւեալ կերպով:

Կ. Պոլսոյ եկեղեցիներու քաղաքիցները, աւագ երեցները, թաղ. խորհրդոյ դիւանները և անպաշտօն եպիսկոպոսները ու վարդապետները ժողով կը կազմեն Պատրիարքի հրաւիրանքը և իրեն Կ. Պոլսոյ թեմին ընտրող պատուիրակներու ժողով կը կատարեն քուէարկութիւնը նման միւս դաւառներուն:—

6. Այս քուէները պիտի տրուին համամատարար իւրաքանչիւր վիճակի ժողովուրդի թուոյն: 10,000 կամ նուազ թիւ ունեցող վիճակի քուէն երկուք է: Տասը հազարէն մինչև քսան հազար չորս քուէ: Այսպէս չարունակ իւրաքանչիւր տասը հազարի կրկին քուէ:—Որոշուած ժամանակին երբ քուէարկութիւնը կատարած է իւրաքանչիւր վիճակ զայն կը հաղորդէ կեղրոնին:

7. Իւրաքանչիւր դաւառն հասած քուէներուն մէջն առաւելագոյն քուէ ստացող եօթը եպիսկոպոսներուն վրայն երեքը վերջնական ընտրելի կը քուէարկէ Ազգ. ժողովը և զանոնք կը ներկայացնէ Արարատեան Մայր-Աթոռին ձեռնադր չորս պատուիրակներու, երկու եպիսկոպոս, երկու աշխարհական:

Եթէ գաւառներէն եկած ընտրելիները եօթէն պակաս կըլլան նոյն թիւը կը լրացնէ Ազգ. ժողովը առնելով զանոնք եկեղեցական վիճակային ժողովոց փակեալ ցանկէն:—

Վերջինեալ երեք ընտրելիներէն իւրաքանչիւրը Տաճկաստանի հայոց և անոր ենթարկեալ վիճակներուն հայոց ընտրելիներն են: Մի և նոյն գործողութիւնը կը կատարուի նաև Ա. Ելմիածնի կողմէն և կ'ընտրուին չորս պատուիրակներ Ա. Ելմիածնի միաբանութեան և անոր վիճակներու կողմէն:

8. Որոշեալ օրը Ռուսաստանի և Տաճկաստա-

նի պատուիրակները գումարուելով Ա. Ելմիածնի Տաճարին մէջ ընդ նախադասութեամբ կաթողիկոսական տեղապահի, ի ներկայութեան միաբանութեան և ժողովուրդին կը կատարուի քուէարկութիւնը, իւրաքանչիւր կեղրոնի պատգամաւորը իրենց քուէից համեմատական գորութեամբ և ի ընկն պատգամաւորներու ընտրելեաց միոյն վրայ միայն, անմիջապէս քուէհամարը կը կատարուի և այն եպիսկոպոսն որ քուէից բացարձակ առաւելութիւն ստացած լինի նոյն հետայն ԿԱԹՈՒՂԻԿՈՍ կը հռչակուի:

Եթէ քուէհամարի արդիւնքն հաւասար լինի, կամ քուէից բացարձակ առաւելութիւն չը գոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողներուն վրայ երկրորդ և վերջնական քուէարկութիւն կը լինի և քուէհամարը կատարուելով առաւելագոյն քուէ ստացողն Կաթողիկոս կը հռչակուի անմիջապէս:

9. Կաթողիկոսական տեղապահը կը հաղորդէ Նորընտրի Կաթողիկոս—Հայրապետին անունը առ Վ. Կ. Կայսրն Ռուսաց և կը խնդրէ հաւատաւորութեան հրովարտակը:

10. Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետը անմիջապէս կ'ընտրէ իւր տեղապահը:

Տեղապահի պաշտօնն է ի բացակայութեան և ի վախճանման Կաթողիկոսին, Արարատեան Մայր-Աթոռը պահպանել մինչ ցարձ կամ ցնոր ընտրութիւն:

— Այն ծրագրին վրայ հարկ չենք տեսներ երկար խօսել: Դեռ ծրագիր է և Ազգ. ժողովը զայն կընդունի, կը մերժէ, կը բարեփոխէ և այդ փոփոխութիւններն ըլլալէ վերջ խօսուել է: Ասկէ զատ չը բաւի մեր Ազգ. ժողովոյ քուէն: Ամէն ինչ մեր կամքէն կախեալ չէ: Կաթողիկոսական Յանձնաժողովը բանակցութիւններ ունէր կատարելիք, այդ բանակցութիւնները ամենքն ալ կատարած է թէ ոչ, յաջողած է թէ ոչ: Ահա ասոնք են դիտարկուելիք: Եթէ չէ կատարած կամ չէ յաջողած իր բանակցութիւններուն մէջ, այն ատեն մեր ծրագիրները չեն ունենար մեծ արժէք մը: Այս կէտը մէկդի դնելով կը տեսնենք թէ Կաթողիկոսական յանձնաժողովոյ մէջ տիրապետող հոգին եղած է մեծ յարգանք մը առ Մայր-Աթոռն մեր, և զԱյն գորացնելու փափաք: Պարզ էր որ այս այսպէս ըլլար, նախ որ իւրաքանչիւր եպիսկոպոս Կաթողիկոսացու մ'է և իրեն ապագայն կը պատրաստէ. երկրորդ որ ազգին մէջ տիրապետող հոգին Ելմիածնական է, և մեծ չափով մը կը նշտաւորի, ազգային պէտք մը շրջապատել Արարատեան Մայր-Աթոռը ամենախորին յարգանք և սիրով, և զօրաւոր ընդ նորա գիրքը, և ով որ կը չեղի այս ուղղութիւնէն նա չէ կարող համակրութիւն գտնել ազգէն: Կաթողիկոսական յանձնաժողովը ինքն ալ մասնակցի այս տիրապետող դադախարներու և զգացումներու, գործած է անոնց տպաւորութեան ներքեւ: Իցիւ թէ Ելմիածնի ալ աշխատէր աւելցնել այս սէրը:

Այս ծրագրի մէջ ոչինչ կայ որ հարկադրելով զաղանապահութիւն, զայն ի վաղուց ծանօթացնելով ազգին օգտակար գործ մը կըլլար, իմաստաւոր իմաստով նաև ձեր կողմերու ձեր մասնակի կարծիքը: Գանձաժողովը իր տեղեկագրին մէջ ազատօրէն կը տրամադրէ և ձեր մասին, տարրական էր անգամ մ'ալ, զէ՛ք անուղղակի, ձեր կարծիք իմանալ: Սոյն սխալին մէջ կիցայ նաև Ազգ. ժողովը: Սա կէտն հարկ է մտածել որ մենք ձեր մասին որոշում չենք կրնար տալ, այլ փափաք յայտնել կընենք, և այդ փափաքները գործադրելի են նախ ուրիշ պարագայներով, երկրորդ ձեր հաճութեամբը: Գանձաժողովը իր տեղեկագրին քիչ չափ մով գրած է, կէտեր կան որոց վրայ թէ՛ չափ միտք հոգնեցնելու է հաւանաւոր համար: Տեղեկագրին մէջ կան կնճառտ կէտեր որք բաւական պարզաբան պէտք ունին:—Մերթ ընդ մերթ ալ ուղիղ բանի հակառակ կէտեր կան, որք կը զարմացնեն, օրինակի համար Կաթողիկոսական ընտրութեան եղանակին մէջ մեր Ազգ. ժողովոյ կատարելիք դերը, ըստ ծրագրին:—Իւրաքանչիւր հայ վիճակ Թիւրքիոյ մէջ պիտի յայտնէ իր ընտրելին, ըստ, և ենթադրենք, ինչպէս չափ հաւանական կը թուի որ ըլլայ եթէ այս եղանակ ընտրութիւն մը պատահի, որ միաձայնութեամբ կամ ստուար միջամասնութեամբ երկու կամ երեք անուններ քուէ ստացան, արդ ինչ հարկ այս անունները եօթի լրացնել անոնց մէջն երեքը ընտրելու ընել: Եթէ Թիւրքիոյ հայ ժողովուրդը երեք անձ ցուց տուած է, Ազգ. ժողովը անոնց վրայ չորս անուն ալ կ'աւելցնէ:

և վերջը այդ չորսն երեքը ընտրելի կընէ: Այս եղանակով թիւերը ընտրելու հայ թեմերուն ցոյց տուած ընտրելիները կրնան ետ մնալ և Ազգ. ժողովը իր ուզածը յառաջ կը վարէ, որ իր աւելցուցած լորտին մէջն է, այն ատեն ինչ հարկ այս եղանակ ընտրութեանց դիմել: Գուցէ ըսեն թէ՛ Ազգ. ժողովը կը խոնարհի ընդհանրութեան քուէի առաջ, ապիպայ չը կրնար ըլլալ, քանի որ իրեն իրաւունք մը վերապահած է, այդ իրաւունքը պիտի գործադրէ: Ազգ. ժողովը ազատ է թիւերը իր հայոց քուէն նկատողութեան առնել կամ չառնել, ըստ յանձնաժողովի ծրագրին, և քանի որ այս այսպէս պիտի ըլլայ, լաւագոյն է մէջէ մէջ դարձուած ընտրելիները, և զինքն թողու գործել սահմանադրութեան շրջանին մէջ, կամ հարկադրել որ թիւերը հայոց թեմերու քուէն յարգէ և գործադրէ: Ինչ և է սպասենք տեսնել ինչ կարծիքներ պիտի յայտնուին, ինչ որոշումներ պիտի դրուին, և այս ամէնը զուտ կորուստ պիտի ըլլան թէ ոչ, կամ թէ աւելի վնասակար հետեւութիւններ պիտի ունենան:

Այ տեղ չըմնար ուրիշ խնդիրներու վրայ խօսել այսօր: Լօրէ ՏԵՖԵՐԵՆԻ գալուստը օրուան միւծ խնդիրն է: Եւրոպական լրագիրները արդէն լաւական լաւ գրած են հայոց խնդրոյ մասին, լորդը գալէն առաջ, որոց անշուշտ տեղեակ է: Անգղիական հասարակական լրագիրը լորդին է, և ինչպէս խօսուած ու գրուած է, Անգղիոյ զանազան պահանջները գործնական կերպով կարգադրելու պիտի ծառայէ այդ նաւատորմը: Անգղիոյ ղեկավարը Մուլթանին ներկայացուց, և երկու տեսակցութիւն մը ունեցաւ: Արտաքին թէ հայոց խնդրոյ վրայ լաւական խօսուած է, սակայն դեռ, զէթ մենք որոշ ըսն մը չիմացանք: Բաներ մը կը պատմուին բայց զանազան ստուգելու ատեն չունեցանք: Մուլթանի և դեռ պահի ու անոնց երկու թարգմաններու մէջ խօսուածները դիւրաւ դուրսը չեն իմացուիր: Գուցէ թիւերը արդիւններէ լուր տարածուի: Տեսնենք, մի քանի օրէն պէտք եղածը կը գրենք:

Այս դէպքերու մէջ յիշատակեմ ալ իր ձայնը լսելի կ'ընէ: Ազգ. ժողովոյ ներկայացուցչաւ անոր հաշուեցոյցը, այս տարի բացը աւելի քիչ է, սակայն վաղը ցաւալի դրութեան մէջ, Պատրիարքի ներկայութիւնը անհրաժեշտ է, պարտքը յուսահատութեան մէջ կը դնէ վաղը: Գարման կը խնդրեն, ով պիտի կամենայ դարման տանել, ինչ կ'ընէ յիշատակեմ այս արտաքին յանձնաժողովը, որ պարտքին վրայ ինքն ալ պարտք աւելցուց, և որուն աշխատանքներն ալ, զորս չենք կրնար ուրանալ, ապարդիւն մնացին:

Սրբազան Պատրիարքը հիւանդ կ'ըլլուի, հետեւաբար չէ կարող տեսակցել լորդ ՏԵՖԵՐԵՆԻ հետ:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Որովհետեւ ամենքը մտադրում են պատերազմական միջոցներով Տիբեթին, որ նա ինքնակամ արմատականները ազդեցութեանը և իր բացակայութեամբ սպաննական թագաւորի ընդունակութեան ժամանակ նպաստեց ցոյցերին, այժմ միջոցները անհրաժեշտ է համարուած բացատրել իր վարմունքը և այդ բացատրութիւնը նա ինքն է մի խօսակցութեան ձևով «Morning News» լրագրի թղթակցի հետ: Գնենալ Տիբեթը յայտնում է, որ ըստ պատմական նրա մօտ յարաբերութիւնների մասին արմատական կուսակցութեան հետ զրպարտութիւն է: Նա երբեք չէ պատկանել քաղաքական ոչ մի կուսակցութեանը և իր կամութիւնը որ և է կուսակցութեան հետ միանալու մասին պատճառ դարձաւ նրա անկման: Խօսելով սպաննական թագաւորի ընդունակութեան մասին, նա նկատում է, որ առաջ դրուած դրութեան մէջ էր գտնվում այդ առիթով, որովհետեւ զանազան տեղերից միմեանց հակասող հրահանգներ էր ստացել: Առաջ ասում էին, որ Ալֆոնս XII-ի համար թագաւորապատճառ ընդունելութիւն պէտք է լինի, յետոյ ասացին, որ նրա ընդունելութիւնը այդքան պաշտօնական չի լինի: Միևնուրեք յայտնում է, որ նրա բացակայութիւնը Ալֆոնս թագաւորի ընդունելութեան ժամանակ նրա պաշտօնական անկումը զիջաւոր պատճառը չէր: «Միևնուրեք»-ը, ասեց նա, ինչ հրամաններով համար մի առիթ էր փնտռուած: Եւ զոհեմ եմ Սպանիային կամ Գերմանիային, չը գիտեմ ճշգրտութեամբ այդ երկուսից որին հմտագրւած, բայց կարծում եմ, որ Գերմանիային:

Կրկնելով, որ նրա ամենամեծ յանցանքը իր հեղինակութիւնը և ժողովրդականութիւնը էր, Տիբեթին հաւատարմութեամբ է, որ նա երբեք դաւադիր չէ եղել իր ընկերների դէմ:

—Փարիզի մէջ նորերումս գումարվեցաւ բանտը: Ներքի կոնքրետը և արդէն չորս նիստեր ունեցաւ: Բանտը ներքի շատերը գեղեցիկ ճառեր արտասանեցին և ցոյց տուին որ նրանք ծանօթ են գործի և բանտը ներքի դրութեան հետ և կարող են խօսել:

—Հանխայի լրագիրները հաղորդում են, որ չինական կառավարութիւնը մի քանի ամիս առաջ համաձայնեց 50,000 տալ վճարել Ֆրանսիական միաժողովը Տիբեթին սպաննական մասին:

—Գերմանական լրագիրների խօսքերի համեմատ, Մուլտար-փաշայի ներկայութիւնը գերմանական զօրախաղերին և վիճելով կայսրի մօտ ընդունելութիւնը քաղաքական նշանակութիւն ունի, որը մինչև այժմ քաղաքական նիւթի շատութեան պատճառով արժանաւոր կերպով չէ գնահատուած: «National Zeigt» լրագիրը ասում է. «քաղաքական և զինուորական այն նպատակները, որոնց պատճառով Մուլտար-փաշայ Գերմանիա հասաւ, անկասկած քաղաքներ են: Անուամենայնիւ, ինկատի առնելով այն ջանքերը, որոնք գործադրուած էին թիւերի և Միջին Եւրոպայի դաշնակիցների մէջ եղած բարեկամութիւնը խախտելու համար, անկասկած է հնարել, որ թուրքաց ռաշի-րի Համբուրգ ուղարկելը նշանակուող ցոյց է: Հաշտութան յաղթական պաշտօնը դադար-Մուլտար-փաշա մի մասնագետ է, որ աւելի լաւ ծանօթ է այն երկրների տեղական պայմանների հետ, որտեղ պէտք է կատարվի վերջնական գործողութիւնը: Հայաստանի ստորադրական առանձին նշանակութեան չորսիւն այնտեղ պէտք է վճարվի թիւերի և վիճակը: Նոյն լրագիրը հաղորդում է, որ Մուլտար-փաշա անսովոր ձգտումն ցոյց տուց որքան կարելի է մանրամասնօրէն ծանօթանալու համար գերմանական զինուորական հիմնարկութիւնների հետ:

—Բերլինի լրագիրները հաղորդում են, որ շուտով Լայպցիգի կայսերական դատարանի մէջ 10 դործեր կը ընդունվեն, որոնք քաղաքական բարձր նշանակութեան ունեն: Այդ դործերից մէկը Կրաչկովսկին է, որին մեղադրում են պետական դատականութեան մէջ: Այդ դործի մասին սկզբնական ընթերցումը արդէն կատարված է: Կայսերական դատարանին ներկայացրած են ըստ դատական ներքին ու օրէնքով դատաստանական պալատը պէտք է վճարէ, արդեօք պէտք է ենթարկվի Կրաչկովսկի դատաստանի թէ ոչ:

ԻՍԱՌԵՆ ԼՈՒՐԵՐ

Կենսագրական մի քանի տեղեկութիւններ ֆրանսիական պատերազմական նոր միջոցաւորի մասին: Գնենալ Կամպրոնի համարվում է ֆրանսիական ամենալաւ զինեղանքներից մէկը: 1851 թվին, լինելով դեռ ևս շատ երիտասարդ կապիտան, նա բողոքեց պետական յեղափոխութեան դէմ, որի պատճառով ծառայութիւնից արձակվելով սքստութեան: Ապա Կամպրոն մի քանի տարի անցկացրեց Տուրինում, ուր Տուրինի Բէյնի մեծ ծառայութիւններ մատուցեց, օգնելով նրան կազմակերպել Տուրինեան ղզղը: Դրանից պատերազմի սկսվելուց առաջ նա ներսումն ստացաւ կայսրից և նորից մտաւ զինուորական ծառայութեան մէջ: Բայց զինուորական ծառայութեան աստիճանների վրա նա շատ դանդաղ էր բարձրանում, այնպէս որ, երբ սկսվեցաւ 1870 թվի պատերազմը, Կամպրոն փոխգնդապետի աստիճան ունէր: Խաղաղութեան դաշին կապելուց յետոյ, գնդապետի աստիճան ստանալով, նա նշանակվեցաւ զինեղանքի ղեկավարի պաշտօնին: 1875 թվին Կամպրոն ստացաւ զինեղանքի աստիճան: Գամպրոնի վաղուցվայ կողմնակից լինելով, Կամպրոն, չանձ միջոցաւորութիւնը կազմակերպելու ժամանակ, պատերազմական միջոցաւոր պարտիզոլ ստացաւ: Այդ միջոցաւորութեան անկումից յետոյ, Կամպրոն ունիւր որոշ պաշտօն չունէր:

Միևնուրեք աստվածացած Ֆեռասկար հեռուաւոր երբ մասնակ հասակում: Բժշկական Գէկէն «Society of Public Medicine» ամ-

սաղորմ պատմում է, որ ինքն բժշկում էր 38 երեխաներին, որոնք սկսել էին ծնել 9-ից մինչև 14 տարեկան հասակը: Այդ երեխաներից 27-ը ծնելու պատճառով ենթարկված էին զանազան հիւանդութիւններին: Օրինակ, նրանցից մի քանիս- ների արեան շրջանառութիւնը խախտված էր, մի քանիսն ընդունակութիւնները բը- թացել էին և սաստիկ հակում ունէին դէպի խմիչքները: Արեան հետադադարութիւնը 9-ից տուեց կարմիր գնդակների պակասում: 12 երե- խաներ ընթացիկ միջոց արեան հետադադարութիւն ունէին, 10 երեխաներ տանջվում էին անքնութիւնից, իսկ մէկը բարակացաւ ունէր: Երեխաները որքան վաղ էին սկսել ծնել, այնքան աւելի զգալի էին վատ հետեանքները: 38 երեխաներից 8-ը տասերկու տա- րեկանից փոքր էին, նրանցից 12-ը կէս տարի ար- դէն ծնում էին, 8-ը—մէկ տարի և 16-ը երկու տարուց աւելի: Երկուսով և խինյայով բժշկու- թիւնը լաւ հետեանքների չէր հասցնում, բայց երբ երեխաները բոլորովին թողնում էին ծնելը, առողջանում էին: Այդ երեխաներից 17-ը վեց ամիս բժշկվելուց յետոյ առողջացան, իսկ մնացածները մէկ տարուց յետոյ:

«Ind. Belge» լրագրի Լօնդոնի թղթակիցը սեպտեմբերի 21-ից գրում է հետեանքը: Ստրաս- ֆորդ (Ավօնի վրա) քաղաքի քաղաքային վարչու- թիւնը նորից սկսեց ընդել Եւրոպայի նշանա- քի տեսչակի տեսչի և Կարմիր խաչի կրօնական նախա- դիր: Սակայն, ժողովը առաջուց արդէն վճարել էր ընդդիմանալ այդ նախագիծը: Իրադրածները, անպատուութիւն համարելով այդ քայլը մեծ բանա- ստեղծի նշանակութիւն համար: Այս օրերս ժողովը միա- ձայն ընդունեց հետեան վիճակը: Համայնական խորհուրդը հանդիսաւոր կերպով բողոքում է ա- մեն առաջարկութեան դէմ, որ նպատակ ունի տե- դափոխել որ և է նպատակով Եւրոպայի մնացոր- դները, գերեզմանը կամ մահարձանը: Պէտք է խոս- տովանել, որ Պորտուգալիան քաղաքային վար- չութեան խորհրդի եռանդոտ ընդդիմադրութիւնը պաշտպանում էին և այն բոլոր երկրները, ուր միայն գտնվում են անմահ բանաստեղծի պաշտոն- ները: Քաղաքային խորհրդարանում բազմաթիւ դժգոհ նամակներ ստացվեցան Ֆրանսիայից, Իտա- լիայից, Գանիայից, Ռուսաստանից, Կանադայից, Յունաստանից և այլ բազմաթիւ երկրներից, որոնց թիւը խիստ մեծ տեղ կը բռնէր: Անգլիայում Եւրոպայի մարմինը տեղափոխելու և նրա գաղա- թիւ հետադադարը դէմ առաջին բողոքողը եղաւ: Թուսան Գլադստոն, առաջին միջոցաւոր եղբայրը:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌՄԱՆԻՐԵՐ

ՀԻՍՏԻՍԱՌԵՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԴԻ, 7 հոկտեմբերի: 1881 թուականի մարտի 1-ի արեան տեղը կա- ռուցվող տաճարի հիմնադրութեան հան- դէպը կատարվեցաւ որոշված հանդիսի հա- մեմատ և վերջացաւ ժամի 2-ին կէս օրից յետոյ:

ՄՕԳԻԼԵՅՈՎ-ՊՕԳՈԼՍԿԻ, 7 հոկտեմբերի: Զիվօնկա անուանած տեղում հրէական սինագոգայի մէջ պատահած դժբաղդու- թեան մասին աւելի մանրամասն տեղե- կութիւններից երևում է, որ կորած հրէա- ների թիւը 46 է, վերաւորվածներինը 50: Սարսափը պատահեց մի հրէական հագուս- տի այրվելուց:

ԲԵՐԼԻՆ, 7 հոկտեմբերի: «Nordd. Allg. Zeigt» լրագիրը հրաւում է «Новое Вре- мя» լրագրի հաղորդութիւնները Մուլ- տար-փաշայի առաջարկութիւնների մասին: Գերմանիայի մէջ Մուլտար-փաշա դաշնակ- ցութիւն չէ առաջարկել, այլ կրկնել է թիւերը զանգաւանները բողոքական, ե- դիպտական և հայկական գործերի մասին: Նոյնպիսի զանգաւաններով Բ. Գուռը զիմել է Ս. Պետերբուրգ, Լօնդոն և Վիէն- նա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԴԻ, 7 հոկտեմբերի: Երէկ վերադարձաւ Ս. Պետերբուրգ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչ Աւագը իր որդի Մեծ Իշխան Պետր Նիկոլայեւիչի հետ: Առաջին

կիսամեակի պետական եկամուտները հաս- նում են 286,741,511 ռ., անցեալ տար- վանից 3,363,618 ռուբլ պակաս, իսկ նոյն ժամանակվայ ծախսերը հասնում են 314,801,348 ռուբլ, անցեալ տարվանից 11,079,691 ռ. աւելի: Հիւսիս-արեւմտեան նահանգներում նոր դատարաններ հիմնե- լու համար յատկացրած է 237,675 ռ.: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմբերին ճանապարհների հաղոր- դակցութեան միջոցաւորութեանը կը ներ- կայացվի անցեալ տարի մշակված նախա- դիւր Տիբեթի գետի շրջակաների բարեդը- ման մասին: Մինչև այդ ժամանակ կը հասնի Ս. Պետերբուրգ մի պատգամաւո- րութիւն Տիբեթի քաղաքի կողմից միջնոր- դելու գետի շրջակաների բարեդման մասին: Նոյնպիսի միջնորդութիւն մտադիր է ներ- կայացել Տիբեթի գետի մասին: Ճանապարհ- ների հաղորդակցութեան միջոցաւորութիւնը նախագիծ է պատրաստում բոլոր երկա- թուղիների տարիքը կառավարութեան իրաւասութեանը ենթարկելու մասին:

ՎԻԵՆԱ, 7 հոկտեմբերի: Կայսրը երեկ ընդունեց Մուլտար-փաշային, որը ներկայ էր Եւրոպայի մէջ տուած հանդիսաւոր ճաշին:

ՍՕՖԻԱ, 7 հոկտեմբերի: Արաքսի գոր- ծերի միջոցաւ Բալաբանով այսօր ուղեոր- վում է Ս. Պետերբուրգ, տանելով իր հետ հաստատված պայմանագրերը Ռուսաստանին զինուորական ծախսերի հատուցման մասին: ԼՕՆԴՈՆ, 7 հոկտեմբերի: Հօն-Կօնցից հաղորդում են, որ չինացիները պատրաստ- վում են փակել Կանտոնի նաւահանգիստը և այնտեղ գործեր են կենտրոնացնում:

Կ. ՊՕԼԻՍ, 7 հոկտեմբերի: Զմիւռ- նիայի և մանաւանդ Չեսմայի շրջա- կանները սաստիկ վնասվեցան երկրաշարժից: Շատ գիւղեր աւերված են, մօտ 1000 մարդ է փչացած:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 7 հոկտեմբերի: Այստե- ղի շրջականերում նորից խօլերա յայտնվե- ցաւ, արդէն մահուան չորս դէպքեր են եղել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԴԻ, 7 հոկտեմբերի: Պետա- կան բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 97 ռ., երկրորդ 94 ռ., երրորդ 94 ռ. 37 կ.: չորրորդ 93 ռ. 62 կ., հինգե- րորդ 94 ռ. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսը արժէ 214 ռ., երկրորդ 205 ռ. 25 կ., արեւելեան առա- ջին փոխառութեան տոմսը արժէ 90 ռ. 87 կ., երկրորդ 91 ռ., երրորդ 91 ռ., ոսկի 8 ռ. 34 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդո- նի վրա արժէ 23³/₁₆ պէսն, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 201 մարկ, ֆա- րիզի վրա 248¹/₄ ֆրանկ: Բօրսայի տրամա- դրութիւնը հանգայտ է:

ԲԱԹՈՒՄ, 8 հոկտեմբերի: Ճանապարհնե- րի հաղորդակցութեան միջոցաւոր, Սալով և Կելեքի ինժեներների հետ, նայեցին Բա- թումի նաւահանգիստը և երեկ ճանապարհ ընկան դէպի Նովորոսիսկ:

ՀԱԼԻՖԱԿՍ, 8 հոկտեմբերի: Հիւրանոց- ներից մինի մէջ կայանաւորված են երկու մարդիկ, որոնցից մինի ազգանունն է Բրէկս, իսկ միւսինը Հայմը: Նրանց բազաժի մէջ գտնվեցաւ նշանաւոր քանակութիւն դիւնա- միտային պատրոնների և ժամանցյալ երկու մեքենաներ: Կալանաւորվածները իրանց ա- մերիկացի են յայտնում:

ՄԱԳԻԴԻ, 8 հոկտեմբերի: «Ерора» լրագիրը հաղորդում է որ Պորտուգալիայում Վիլիէնս- վա ամված տեղում, ապստամբութիւն ծագեց: Իշխանութիւնները թողեցին քաղաքը:

Խաղաղ—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

